02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

34 (1433) • 13 սեպտեմբերի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Ոստիկանության պետը դիրքեր հանձնարարեց ՈՉ հերթափոխին

Հերթական անգամ տեղի ունեցավ ոստիկանության զորքերի մարտական ծառայության հերթափոխը:

ՀՀ ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-մայոր Վալերիյ Օսիպյանը ողջունեց սահմանապահ ոստիկաններին եւ մաղթեց բարի ծառայություն՝ հատուկ ընդգծելով, որ նրանք իրենց խիզախությամբ ու պատրաստակամությամբ լրացնում են համակարգի բացերը: Ավանդույթի համաձայն՝ մեկնելուց առաջ ոստիկանները երդվեցին ու աղոթեցին: Օրհնության կարգին հաջորդեց շարային երթը:

Հաջորդ օրը դիրքերից վերադարձան ոստիկանության զորքերի մեկ այլ զորամասի ծառայողները: Վալերիյ Օսիպյանը նրանց շնորհակալություն հայտնեց առաքելությունը պատվով իրականացնելու համար՝ շեշտելով, որ նրանց նվիրումն ու սրտացավությունը վարակիչ է: Առաջին անգամ դիրքեր մեկնած ծառայողները պարգեւատրվեցին պատվոգրերով: Հանդիսավոր արարողությունը եզրափակվեց քայլերթով:

ԵԱՀԿ ներկայացուցչի այցը ոստիկանություն

Սեպտեմբերի 11-ին ոստիկանություն էր այցելել ԵԱՀԿ անդրազգային սպառնալիքների ստորաբաժանման ոստիկանության ռազմավարական հարցերի բաժնի համայնքային ոստիկանության գծով խորհրդական Մոնա Նորնբերգը: Նրան ընդունեց ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Հովհաննես Քոչարյանը:

Հանդիպմանը քննարկվեցին ԵԱՀԿ-ի եւ ՀՀ ոստիկանության համագործակցության ուղղություններն ու նախանշվեցին կատարվելիք աշխատանքները, մասնավորապես՝ ոստիկանության ծառայողների հմտությունների կատարելագործման ուղղություններով:

Հովհաննես Քոչարյանը բարձր գնահատեց համագործակցությունը, ինչի շնորհիվ իրականացվել են բազմաթիվ ծրագրեր: Նա հյուրերին ներկայացրեց նաեւ ՀՀ ոստիկանության ձեռքբերումները՝ գործունեության արդիականացման ուղղությամբ, մասնավորապես՝ պարեկային ոստիկանության մոդելի ներդրման ծրագրի եւ այլ ուղղություններով:

Հյուրերին ընդունեց նաեւ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության պետ, ոստիկանության գնդապետ Աշոտ Ահարոնյանը:

Մոնա Նորնբերգը բարձր գնահատեց ոստիկանության այս ստորաբաժանման կատարած աշխատանքներն ու ձեռքբերումները: Խոսվեց տեղեկատվության տրամադրման, լրագրողների հետ աշխատանքի եւ ոստիկանության գործունեության թափանցիկության հարցերի մասին: Աշոտ Ահարոնյանը ընդգծեց, որ այս հարցում ոստիկանությունը գործում է բացառապես օրենքի սահմաններում՝ հաշվի առնելով բոլոր կողմերի շահերը:

Մոնա Նորնբերգը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության եւ ստորաբաժանման կատարած աշխատանքի համար: Բարձր գնահատելով ԵԱՀԿ-ի հետ համագործակցությունը՝ Աշոտ Ահարոնյանը ներկայացրեց համագործակցության ընդլայնման այլ ուղղություններ եւս:

Սպանության մեջ մեղադրվողը տեղափոխվեց Հայաստան

Սեպտեմբերի լույս 7-ի գիշերը ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողների ուղեկցությամբ Մոսկվայից Երեւան տեղափոխվեց Վաղարշապատում հաշվառված 48-ամյա մի տղամարդ: Նա 2001 թվականից հետախուզվում էր սպանության, բանդիտիզմի եւ պաշտոնատար անձի կոչումը կամ իշխանությունն ինքնակամ յուրացնելու մեղադրանքով:

Հետեւողական աշխատանքի արդյունքում նախորդ տարվա սեպտեմբերին ոստիկանության ՔՀԳ վարչության ծառայողները օպերատիվ տվյալներ էին ստացել, որ առանձնապես ծանր հանցագործության մեղադրանքով հետախուզվողը թաքնվում է ՌԴ Ռամենսկ քաղաքում: Ռուսաստանի գործընկերների հետ արդյունավետ համագործակցության շնորհիվ հետախուզվողը հայտնաբերվել ու ձերբակալվել էր: Մեկ տարի անց 48-ամյա տղամարդը արտահանձնվեց Հայաստան:

Ոստիկանության ծառայողները եւս մեկ անգամ հաստատեցին, որ չբացահայտվող հանցագործություններ ու չհայտնաբերվող հետախուզվողներ չկան. ամեն ինչ ժամանակի եւ հետեւողական աշխատանքի հարց է:

Ինքնությունը պարզվել է. հայտարարվել է հետախուզում

Ոստիկանությունը բացահայտել է սեպտեմբերի 4-ին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում կատարված սպանության փորձի դեպքը:

Հիշեցնենք, որ ոստիկանությունում ահազանգ էր ստացվել Անդրանիկի փողոցի թիվ 34 շենքի բակում հնչած կրակոցների վերաբերյալ: Ահազանգից րոպեներ անց «Աստղիկ» բժշկական կենտրոնից ոստիկանության Մալաթիայի բաժին հայտնեցին, որ հրազենային վնասվածքներով բուժօգնության են տեղափոխվել 62 եւ 45 տարեկան տղամարդիկ: Դեպքի վայր մեկնեցին ոստիկանության մի շարք ստորաբաժանումների օպերատիվ խմբեր, այլ իրավապահ մարմինների ներկայացուցիչներ:

Դեպքի վայրում հայտնաբերվեց «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենա՝ կրակոցների հետքերով: Հայտնաբերվեց նաեւ ինքնաձիգի 26 պարկուճ:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվեց հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձի ինքնությունը՝ 1977 թ. ծնված Ս. Մ.-ն էր:

Քրեական գործի շրջանակներում Ս. Մ.-ն ներգրավվել է որպես մեղադրյալ: Նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Ապօրինություններ դպրոցում

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչությունում չարաշահումների վերաբերյալ տեղեկություններ էին ստացվել:

Տեղեկությունների հիման վրա վարչության ծառայողների եւ ոստիկանության Վաղարշապատի բաժնի աշխատակիցների համատեղ ձեռնարկած միջոցառումներով պարզվել է, որ Արմավիրի մարզի Այգեկ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրենը 2016 թ. հունվարից 2017 թ. փետրվարը եւ 2009 թ. հունվարից 2019 թ. մայիսը որպես դպրոցի գիշերային պահակ է հրամանագրել երկու հոգու: Պահակները փաստացի աշխատանքի չեն ներկայացել, իսկ նրանց աշխատավարձի հաշվեհամարին դպրոցի բյուջեից ամեն ամիս փոխանցվել է 80 հազար դրամ: Արդյունքում, քննությանն այս պահին հայտնի տվյալներով, դպրոցի բյուջեից վատնվել է շուրջ 10 միլիոն 883 հազար դրամ:

Հարուցվել է քրեական գործ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը հայտարարում է «Իրավագիտություն» մասնագիտությամբ մագիստրոսի կրթական ծրագրով հեռակա վճարովի ուսուցման 2019/2020 ուսումնական տարվա ընդունելություն

Շրջանավարտներին շնորհվում է իրավագիտության մագիստրոսի աստիճան եւ տրվում պետական նմուշի դիպլոմ: Ուսման տեւողությունը 2,5 տարի է:

Ընդունելության կարգին եւ պայմաններին կարող եք ծանոթանալ ոստիկանության www.police.am կամ ոստիկանության կրթահամալիրի www.edupolice.am կայքերում:

Երթեւեկության անվտանգությամբ մտահոգ

Վերջին նորամուծություններից է լուսացույցների սյուներին հավելյալ լույսերի տեղադրումը:

էջ 2

Ապօրինություն հանքարդյունաբերությունում

Ապօրինության արդյունքում պետությանը պատճառվել է 95 միլիոն 797 հազար դրամի նյութական վնաս:

էջ 2

«Սպանություն հաշույքի համար»

Իրենց գերմարդ երեւակայող երկու տականքները բանտում հայտնվեցին բորոտների վիճակում:

էջ 5

Համակարգ

Ապօրինություն հանքարդյունաբերությունում

Ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ հանքարդյունաբերությամբ զբաղվող մի ընկերություն, ընդերքի օգտագործման եւ պահպանության կանոնների խախտմամբ եւ առանց հատուկ թույլատվության, 2013-2015 թթ. ընթացքում իրականացրել է օրենքով արգելված ձեռնարկատիրական գործունեություն:

Տեղեկությունների հիման վրա նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ 2013 թ. մարտին ընկերությունը ձեռք է բերել մեկ այլ ընկերության հանքարդյունաբերական սարքավորումները, նրան է փոխանցվել նաեւ Արարատի մարզի Ավշար համայնքի վարչական տարածքում ենթավարձակալված ընդհանուր 10 հեկտար տարածքը, որն այդ ժամանակ գործունեություն ծավալելու համար լիցենզիա ստանալու գործընթացում էր:

Ըստ քննությանը հայտնի տվյալների՝ ընկերությունը նման պայմաններում 2013 թ. մարտից 2016 թ. մարտ ամիսը կազմակերպել եւ իրականացրել է հանքարդյունաբերական ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն: Այդ ընթացքում արդյունահանվել է 2649,6 քմ մակերեսով՝ 9717,9 խմ ծավալով տրավերտին, որից շուրջ 9379,7 խմ-ն, առանց համապատասխան հաշվապահական փաստաթղթավորման, կանխիկ եղանակով իրացվել է:

Ըստ այս պահին քննությանը հայտնի տվյալների՝ պետությանը պատճառվել է շուրջ 95 միլիոն 797 հազար դրամի նյութական վնաս:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Կատարվում է նախաքննություն:

Չարաշահումներ խոշորացված համայնքում

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության, Արագածոտնի մարզային վարչության եւ Արագածի բաժնի աշխատակիցների համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռք բերված նախնական տվյալներով պարզվել է, որ Ալագյազ խոշորացված համայնքի Միրաք վարչական շրջանի նախկին ղեկավարը չարաշահումներ է թույլ տվել:

Քննությանն այս պահին հայտնի տվյալներով՝ նախկին պաշտոնյան վատնել է իրեն վստահված համայնքի բյուջեի միջոցները: Մասնավորապես, 2012 թ. նոյեմբերից 2017 թ. նոյեմբերն ընկած ժամանակահատվածում, առանց օրինական հիմքերի, համայնքի բյուջեից իր կնոջ անվամբ փոխանցել է համայնքապետարանի հավաքարարի աշխատավարձը: Արդյունքում՝ համայնքին պատճառվել է խոշոր չափերի նյութական վնաս:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Կատարվում է նախաքննություն:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Կոռուպցիոն դեպք է բացահայտվել

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության ծառայողները, իրացնելով ստացված օպերատիվ տվյալները, Լոռու մարզային վարչության եւ Ստեփանավանի բաժնի քրեական հետախույզների հետ համատեղ միջոցառումների արդյունքում կոռուպցիոն բնույթի հանցագործություն են արձանագրել:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում իրավապահները պարզել են, որ Ստեփանավանի Հովհաննես Թումանյանի անվան ավագ դպրոցի տնօրենը, ըստ քննությամբ ձեռք բերված նախնական տվյալների, չարաշահելով պաշտոնեական դիրքը, զինղեկից, քիմիայի եւ ֆիզիկայի ուսուցչուհիներից, նրանց հետագա պաշտոնավարման համար, սկզբում՝ հաշվապահի միջնորդությամբ՝ նրա պաշտոնական դրության օգտագործմամբ, իսկ հետագայում՝ անձամբ, 2007 թվականից մինչեւ 2018-ի ապրիլ ամիսը որպես կաշառք պարբերաբար ստացել է հիշյալ անձանց, որպես քաղաքաշտպանության շտաբի պետի եւ լաբորանտների համար սահմանված լրացուցիչ աշխատավարձերի 50 տոկոսի չափով՝ ընդհանուր 2 միլիոն դրամ:

Խոշոր չափերով կաշառք տալու, ստանալու եւ պաշտոնեական դրությունն օգտագործելով կաշառքի միջնորդություն կատարելու առերեւույթ հանցագործությունների դեպքերով հարուցվել է քրեական գործ:

Նախաքննությունը շարունակվում է:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Անչափահասը տեղափոխվեց Հայաստան

Ոստիկանությունը շարունակում է իր իրավասության սահմաններում միջոցառումներ ձեռնարկել ընտանիքներին անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու, անչափահասներին ընտանիք վերադարձնելու ուղղությամբ:

Օրերս ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությունում տեղեկություններ ստացվեցին, որ Ռուսաստանի Դաշնության Սմոլենսկի մարզի սոցիալ-վերականգնողական կենտրոններից մեկում ապաստանել է ծնողական խնամքից զուրկ ՀՀ անչափահաս քաղաքացի:

Տեղեկությունն անմիջապես արձագանք գտավ ոստիկանությունում եւ ձեռնարկված միջոցառումների արդյունքում հայտնաբերվեց անչափահասի մայրը, որը դստերը Հայաստան վերադարձնելու հնարավորություն չուներ եւ խնդրում էր պատկան մարմինների աջակցությունը՝ նրա վերադարձը կազմակերպելու համար:

Հիմք ընդունելով ԱՊՀ անդամ երկրների միջեւ անչափահասներին իրենց մշտական բնակության երկրներ վերադարձնելու համաձայնագրի պահանջները՝ անչափահասը ոստիկանության ՔՀԳ վարչության անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման վարչության շնորհիվ վերադարձվեց Հայաստան եւ ապաստանեց ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնում:

Պատերազմի ու օրենքի զինվորը

Հայրենական մեծ պատերազմի թոհուբոհով անցած շատ հայորդիներ հետագայում ընդունվեցին ներքին գործերի համակարգ՝ շարունակելով պայքարն արդեն հանցավորության դեմ: Միլիցիայի կապիտան Հրաչյա Առաքելյանը նրանցից մեկն էր:

...Ծնվել է 1923 թ., Արթիկում: Տասնութ տարեկան էր, երբ սկսվեց պատերազմը: Մեկ տարի անց զինվորական համազգեստ հագավ ոչ թե ժամկետային ծառայության, այլ դաժան մարտերի մասնակցելու համար:

Ուկրաինական ռազմաճակատի 476-րդ հրաձգային գնդի զինվորը ծանր մարտերի մասնակցեց, մահն իր աչքով տեսավ, մարտական ընկերների կորստի ցավը զգաց, սարսափեց խաղաղ բնակավայրերի ավերածություններից եւ... ուժեղացավ, ամեն մարտից հետո լցվեց հաղթանակի հավատով:

Հաղթանակը, սակայն, Բեռլինում չդիմավորեց: Մարտերից մեկում ծանր վիրավորվեց, իսկ ապաքինվելուց հետո զորացրվեց: Բայց դա իրականում զորացրվել չէր. ծառայության անցավ ներքին գործերի համակարգում:

1945 թ. Երեւանի միլիցիայի դպրոցն ավարտելուց հետո, որպես տեղամասային տեսուչ, ծառայության ընդունվեց նախ Լենինականի, այնուհետեւ՝ Արթիկի ՆԳ բաժնում:

Հետպատերազմյան ծանր ժամանակներ էին, ու միլիցիայի աշխատակիցներին վիճակված էր ոչ միայն հանցավորության դեմ պայքարի գործը, այլեւ թիկունք լինել պատերազմի վերքերը բուժող երկրին, ժողովրդին: Իսկ ժողովրդին ամենամոտ կանգնածը, թերեւս, տեղամասային տեսուչն էր: Արթիկցիները հավատում ու վստահում էին միշտ պատրաստակամ, սրտացավ թաղայինին՝ Հրաչյա Առաքելյանին:

Միլիցիայում հետագա ծառայությունը օպերատիվ աշխատանքի ոլորտում էր: Թալինի ՆԳ բաժնի ԲԽՍՍ տեսուչ, քրեական հետախուզության օպերլիազոր. որտեղ էլ ծառայել է Հրաչյա Առաքելյանը, միշտ վայելել է ղեկավարության ու գործընկերների վստահությունը, հարգանքը:

Հրաչյա Առաքելյանը թոշակի է անցել 1970 թվականին: Վաստակած հանգստի է անցել տասնյակ խրախուսանքներով, «Սխրագործության համար» մեդալով, իսկ ամենակարեւորը՝ իր մարդ տեսակի մասին բարձր գնահատականներով: Ու այդպիսին էլ կմնա իրեն ճանաչողների հիշողության մեջ:

Հ. Պ.

Երթեւեկության անվտանգությամբ մտահոգ

Ճանապարհային երթեւեկության մասնակիցների կյանքի եւ առողջության անվտանգության մակարդակը եւ երթեւեկության մշակույթը բարձրացնելու նպատակով ճանապարհային ոստիկանությունն իրականացնում է ամենօրյա աշխատանք՝ նաեւ կատարելով նորամուծություններ: Վերջին նորամուծություններից է Սայաթ-Նովայի պողոտայի եւ Խանջյան փողոցի խաչմերուկի լուսացույցների սյուներին հավելյալ լույսերի տեղադրումը, որոնց գույները լուսացույցի համապատասխան ազդանշանին զուգահեռ փոխվում են, ինչի շնորհիվ վարորդները կարող են նախքան խաչմերուկին մոտենալը կողմնորոշվել:

Նորամուծություն է նաեւ Ադոնցի փողոցի հետիոտնային անցման վերեւում տեղադրված պրոյեկտորը, որը սնուցվում է արեւային էներգիայով: Այն գիշերային ժամերին հետիոտնային անցման պատկեր է գցում ճանապարհին՝ նաեւ այդ կերպ վարորդներին զգուշացնելով հետիոտնային անցման առկայության մասին:

Նախատեսվում է մոտ ժամանակներում նորամուծություններ կիրառել նաեւ այլ խաչմերուկներում եւ հետիոտնային անցումներում:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Չարաշահում դպրոցում

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում ստացված տեղեկությունների հիման վրա ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Արագածոտնի մարզի Վարդենուտի միջնակարգ դպրոցի տնօրենը ապօրինություններ է թույլ տվել: Ըստ քննությանը հայտնի տվյալների՝ տնօրենը պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ է օգտագործել

եւ տարիներ շարունակ իր տան էլեկտրաէներգիայի գումարը հաշվարկել է դպրոցի հաշվիչի վրա եւ վճարել դպրոցի հաշվից:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Պարզվել է դանակահարողի ինքնությունը

Սեպտեմբերի 6-ին, ժամը 23.30-ի սահմաններում, ոստիկանության Տարոնի բաժնի պարեկային ոստիկանները Տիգրան Մեծի պողոտայի շենքերից մեկի բակից բղավոց են լսել: Շտապել են ձայնի ուղղությամբ եւ նկատել որովայնի շրջանում վնասվածք ստացած մի երիտասարդի: Անմիջապես նրան տեղափոխել են հիվանդանոց:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ տուժածին վիճաբանության ժամանակ դանակահարել է 21-ամյա մի երիտասարդ: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ նրան հայտնաբերելու ուղղությամբ:

Նախապատրաստվում են նյութեր

Գողություն շինանյութի խանութից

Սեպտեմբերի 6-ին ոստիկանության Չարենցավանի բաժնում ահազանգ էր ստացվել, որ Չարենցավանի շինանյութի խանութներից մեկից գողություն էր կատարվել:

Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ, նախնական հաշվարկով՝ տուժողին պատճառվել է մոտ 300 հազար դրամի վնաս:

Գողության փաստով նախապատրաստվող նյութերի ընթացքում Չարենցավանի քրեական հետախույզները ձեռնարկեցին մի շարք օպերատիվ միջոցառումներ: Սեպտեմբերի 7-ի առավոտյան Երեւանում հայտնաբերվեց ու, գողության կասկածանքով, ոստիկանության Չարենցավանի բաժին բերման ենթարկվեց վաթսունամյա մի տղամարդ, որն ապրում է մայրաքաղաքում: Նա տվել է խոստովանական բացատրություն:

Կատարվում է քննություն:

Կրակոց Երեւան-Արմավիր ճանապարհին

Սեպտեմբերի 4-ին ոստիկանության Վաղարշապատի բաժնի քրեական հետախույզները օպերատիվ տվյալներ էին ստացել, որ Երեւան-Արմավիր ճանապարհին՝ Արշալույս համայնքի սկզբնամասում, երկու երիտասարդ երթեւեկության հետ կապված հարցի շուրջ վիճաբանել էին: Այդ ընթացքում նրանցից մեկը ատրճանակը պարզել էր մյուսի վրա, կրակել ու հեռացել էր:

Վաղարշապատի ոստիկանները ստացած տվյալների իսկությունը ստուգելուց հետո կարճ ժամանակում հայտնաբերեցին էջմիածնում ապրող 26-ամյա երիտասարդին եւ, խուլիգանություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկեցին ոստիկանության Վաղարշապատի բաժին: Բերման ենթարկվածը ոստիկաններին ներկայացրեց գազային ատրճանակ: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվեց փականով դանակ:

Հանգամանքները պարզվում են:

Առեւանգում

Օգոստոսի 29-ին ոստիկանությունում ահազանգ էր ստացվել, որ մայրաքաղաքի Չարենցի փողոցում մի երիտասարդ մի աղջկա հարկադրաբար նստեցրել է իր մեքենան ու հեռացել: Աղջիկն օգնություն էր կանչել, անցորդներից մեկն էլ ահազանգել էր 1-02:

Ոստիկանության Մարաշի բաժանմունքի քրեական հետախույզները ձեռնարկված օպերատիվ միջոցառումների արդյունքում պարզեցին երիտասարդի ինքնությունն ու բնակության վայրը: Ահազանգից ժամեր անց Մարաշի ոստիկանները կասկածվողին հայտնաբերեցին ու բերման ենթարկեցին:

Դեպքի առթիվ ոստիկանության Կենտրոնական բաժնի հետաքննության բաժանմունքում քրեական գործ հարուցվեց, բերման ենթարկվածն էլ ձերբակալվեց:

Նախնական տվյալներով՝ երիտասարդն աղջկան տարել էր եղվարդ, նրա կամքին հակառակ պահել մի տան մեջ՝ խափանելով փախուստի փորձերը:

Դեպքի այլ մանրամասներ քննությամբ պարզվում են:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Գողացել էր զբոսաշրջիկի հեռախոսը

Հանրապետությունում, ըստ վիճակագրական տվյալների, զբոսաշրջիկների թիվն օրեցօր ավելանում է, եւ անչափ կարեւոր է, որ նրանք մեր հյուրընկալ երկրում իրենց ապահով ու անվտանգ զգան: Ոստիկանության պետի հրամանի համաձայն՝ եւ օպերատիվ, եւ արտաքին ծառայությունների ստորաբաժանումներն այս հարցում հետեւողական են, ծառայության ընթացքում ուշադիր ու զգոն են:

Օրերս Ռուսաստանի Դաշնության մի քաղաքացի, որ հանգրվանել էր Երեւանում, սեպտեմբերի 1-ին Վայոց ձորի մարզ մեկնել էր Նորավանքը տեսնելու, որտեղ նկատել էր, որ պայուսակից գողացել են բջջային հեռախոսը:

Կատարվածի վերաբերյալ զբոսաշրջիկը ոստիկանության եղեգնաձորի բաժնում հաղորդում տվեց:

Քրեական հետախույզները գողությունը կատարած անձին եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ անհետաձգելի միջոցառումներ ձեռնարկեցին: Օպերատիվ հարցումներ անցկացրին Նորավանքի տարածքում, եղան մարզի այն վաճառակետերում, որտեղ կասկածվողը հնարավոր է վաճառած լիներ գողոնը: Հետեւողական աշխատանքի շնորհիվ գողությունը օրեր անց բացահայտվեց:

Բաժնում տեղեկություններ ստացվեցին, որ նշված գողությունը հնարավոր է կատարած լինի Մարտունի քաղաքի 37-ամյա մի բնակիչ: Քրեական հետախույզների բացատրական աշխատանքի շնորհիվ նա ներկայացավ ոստիկանության եղեգնաձորի բաժին՝ իր հետ բերելով գողոնը:

Ավելի ուշ իրավապահները բաժին հրավիրեցին նաեւ տուժողին եւ նրան հանձնեցին գողացված բջջային հեռախոսը:

«Ոստիկանության եղեգնաձորի բաժնի ծառայողներն անչափ օպերատիվ եւ պրոֆեսիոնալ գործեցին, երկու օրվա ընթացքում հայտնաբերեցին հանցագործին, վերադարձրին իմ հեռախոսը, որտեղ ողջ զբոսաշրջության ընթացքում արված Հայաստանի տեսարժան վայրերի տեսագրություններն էին: Շնորհակալ ու գոհ ենք ոստիկաններից, գերազանց աշխատեցին»,- ասում էր օտարերկրացի կինը:

Կատարվում է քննություն:

Կասկածվողը հայտնաբերվեց

Օգոստոսի 10-ի երեկոյան օպերատիվ կառավարման կենտրոնից ոստիկանության Արաբկիրի բաժնում հաղորդում ստացվեց, որ երկու օր առաջ Նաիրի Զարյան փողոցի տներից մեկից գողություն է կատարվել:

Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ օգոստոսի 8-ին ինչ-որ մեկը, որ հավանաբար լավ գիտեր տան նիստուկացը, մահճակալի ներքնակի տակից փող էր հափշտակել:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում քրեական հետախույզները պարզեցին, որ գողությունը հնարավոր է կատարած լինի տանտիրոջ 31-ամյա մտերիմը՝ Ռյա Թազա գյուղից:

Հաղորդումից ժամեր անց քրեական հետախույզները կասկածվողին հայտնաբերեցին Նաիրի Զարյան փողոցում եւ բերման ենթարկեցին ոստիկանության Արաբկիրի բաժին:

Գողության փաստով հարուցվել է քրեական գործ:

Կատարվում է քննություն:

Կողոպտել էր թոշակառուի

Սեպտեմբերի 5-ին թոշակառու մի կին ոստիկանության Կապանի բաժնում հաղորդում էր տվել, որ Ջորք թաղամասից Արզումանյան նրբանցք տանող կամրջի մոտ մի տղամարդ իր ձեռքից հափշտակել է դրամապանակը, որի մեջ եղել է 96 հազար դրամ եւ դիմել է փախուստի:

Քրեական հետախույզները կողոպուտը կատարած անձին եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում տեղեկություններ ստացան, որ հանցագործությունը հնարավոր է կատարած լինի Կապանի Բաղաբերդ թաղամասի 39-ամյա մի բնակիչ:

Հաղորդումից մեկ ժամ անց կասկածվողը բերման ենթարկվեց ոստիկանության Կապանի բաժին, տվեց խոստովանական բացատրություն, նաեւ մասամբ ներկայացրեց հափշտակած գումարը:

Նախապատրաստված նյութերով հարուցվել է քրեական գործ:

ԳՈՌ ՎԱՆՅԱՆ

Կողոպտել էր զբոսաշրջիկի

Սեպտեմբերի 2-ին մի զբոսաշրջիկ կին դիմել էր ոստիկանության Կենտրոնական բաժին: Նա Թումանյան փողոցում նկատել էր, որ բջջային հեռախոսն ու դրամապանակը, որի մեջ փաստաթղթեր էին, պայուսակում չեն:

Հանցագործության բացահայտմանը միացան ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողները: Շուտով նրանք օպերատիվ տվյալներ ստացան գրպանահատությունը կատարելու մեջ կասկածվողի ինքնության վերաբերյալ:

Դեպքից երկու օր անց 30-ամյա տղամարդը հայտնաբերվեց, բերման ենթարկվեց ու տվեց խոստովանական բացատրություն:

Գողոնը հայտնաբերվել ու վերադարձվել է զբոսաշրջիկ կնոջը:

Նյութեր են նախապատրաստվում:

Խաբեությամբ տիրացել էր նոթբուքին



Օգոստոսի 26-ին ոստիկանության Կենտրոնական բաժին դիմած քաղաքացին հայտնում էր, որ խաբեությամբ հափշտակել են իր նոթբուքը:

Համակարգիչը վաճառելու մասին քաղաքացին հայտարարություն էր տեղադրել համացանցում, գնորդը զանգել էր: Գումարը քիչ հետո վճարելու պայմանով՝ քաղաքացին նոթբուքը թողել էր դեղատանը, գնորդն էլ նրա վստահությունը չարաշահելով՝ խաբեությամբ տիրացել էր դրան: Տուժողին պատճառվել էր 470 հազար դրամի վնաս:

Հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների շնորհիվ Կենտրոնականի քրեական հետախույզները օպերատիվ տեղեկություններ ստացան, որ արարքը հնարավոր է կատարած լինի Աբովյան քաղաքում բնակվող 42-ամյա տղամարդը:

Օգոստոսի 30-ին նա հայտնաբերվեց Առինջ գյուղում, բերման ենթարկվեց ոստիկանության Կենտրոնական բաժին եւ խոստովանական բացատրություն տվեց:

Նախապատրաստված նյութերն ուղարկվել են ոստիկանության Կոտայքի բաժին:

Կատարվում է քննություն:

ԷՐԻԿ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

«Իրավախախտ» կենդանիներն ուրիշի արտում

Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղում ապրող Բաղալյան քույրերը՝ Մարինեն եւ Գայանեն, զբաղվում էին գյուղատնտեսական աշխատանքներով. եղջերավորներ էին պահում, հող մշակում: Իրենց հանապազօրյա հացը քույրերը համատեղ ջանքերով էին վաստակում: Տնից քիչ հեռու հողատարածք ունեին, որտեղ անասնակեր էին ցանել:

Հուլիսի 25-ին քույրերը որոշեցին գնալ հողամաս՝ տեսնելու ցանքը: Մեծ եղավ նրանց զարմանքը, երբ իրենց արտում տեսան արածող երեք խոշոր եղջերավորների: Արտում համարյա խոտ չէր մնացել: Անասնատերը համագյուղացի Պետրոսն էր, որը ամեն օր կովերին տանում էր արոտի ու պարանով կապում արտում:

Զայրացած քույրերը որոշեցին եղջերավորների պարաններն արձակել ու որպես ապացույց տանել գյուղապետարան՝ փոխհատուցում ստանալու նպատակով: Պարաններ-ը տեղավորեցին պայուսակում ու ճանապարհի ընկան: Այդ պահին նրանց մոտեցավ եղջերավորների տերը՝ Պետրոսը: Տեսնելով արձակված կովերին՝ հասկացավ եւ պահանջեց վերադարձնել պարանները: Բայց քույրերն ասացին, որ պարաններից տեղեկություն չունեն:

Պետրոսը քաշքշեց քույրերին, որի ընթացքում էլ պայուսակից ընկան պարանները: Վեճը գնալով թեժացավ: Քույրերը զայրացել էին համագյուղացու արարքից: Պետրոսն էլ ասելիք չունենալով՝ ծեծեց նրանց:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Վարդենիսի բաժնի աշխատակիցները:

Պետրոս Հովակիմյանը խախտել էր քրեական օրենսգրքի 118 հոդվածի պահանջները:

Կատարվում է քննություն:

Վեճի վերջը

Արթիկցի Հովհաննես Կարապետյանը ֆինանսական խնդիրներ ուներ. համաքաղաքացի Վարդանի մոտ աշխատել էր եւ չէր վճարվել: Երկար ժամանակ փորձում էր Վարդանից վերցնել ստանալիքը, բայց չէր հաջողվում: Տարբեր պատճառաբանություններով ձգձգում էր: Հովհաննեսը հոգնել էր Վարդանին զանգելուց ու փողը պահանջելուց: Սրտիպված դիմեց դատարան:

Հայցադիմումի մասին տեղեկացավ Վարդանի որդին՝ Վարուժանը, եւ որոշեց զանգել Վարդանի տղային՝ Կարենին: Հայցադիմումի հետ կապված հեռախոսազրույցը վերածվեց վեճի: Վարուժանը որոշեց ընկերոջ՝ Մուշեղի ներկայությամբ զրուցել Կարենի հետ: Հանդիպեցին իրենց տան բակում: Գոռգոռոցներից բակ ելավ Հովհաննեսը: Իրար հասկանալ չէին կարողանում, ու կրքերը շիկանում էին:

Վարուժանին զայրացրել էր Հովհաննեսի հայցադիմումը: Գոռում էր, աղաղակում, նաեւ խփեց Հովհաննեսին: Մուշեղը եւս «գրոհեց» եւ խփեց Հովհաննեսին:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Արթիկի բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապատրաստման ընթացքում կողմերը բացատրություններ տվեցին:

Վարուժան Գալոյանը եւ Մուշեղ Մնացականյանը խախտել էին քրեական օրենսգրքի 118 հոդվածի պահանջները: Դիմողը, սակայն, բողոքը չի պնդել, եւ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ալկոհոլը՝ թմրամիջոց

Աշխարհը մտահոգված է թմրանյութերի օգտագործման, տարածման, իրացման եւ շրջանառության սպառնալիքներից: Մարդկությունն ուղիներ է փնտրում այդ ախտի դեմն առնելու համար: Բայց, չգիտես ինչու, ուշադրությունից դուրս է մնում մեկ այլ թմրամիջոց, որը, կարելի է ասել, համար մեկն է բոլոր երկրներում՝ ալկոհոլը, էթանոլը, էթիլ սպիրտը:

Հարբեցողությունն ու ալկոհոլը խնդիր են անգամ ամենազարգացած երկրների համար: Օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում ալկոհոլ օգտագործում են վաղ տարիքից. շուրջ հարյուր միլիոն ամերիկացի՝ տասներկուսից բարձր տարիքի, օգտագործում է ոգելից խմիչք: Այդ երկրում 32 միլիոն մարդ օրական խմում է հինգ բաժակ եւ ավելի, իսկ 11 միլիոն մարդ իրեն համարում է թունդ խմող. նրանք շաբաթը մոտ 5-6 անգամ մեկ լիտրից ավելի ալկոհոլ են օգտագործում:

Խմիչքի հանդեպ բավական մեծ հետաքրքրություն են ցուցաբերում երիտասարդ ամերիկացիները. մոտ չորս միլիոնը տասներկուսից-քսան տարեկաններ են, որոնցից 1,9 միլիոնը՝ հարբեցողներ:

Ըստ մասնագետների՝ ալկոհոլը, մյուս թմրանյութերի նման, պատճառ է մահացու դեպքերի եւ բռնությունների: Ցավալի վիճակագրություն կա՝ մահացու ելքով ճանապարհատրանսպորտային պատահարների մեծ մասի մեղավորները հարբած վարորդներն են: Ավելի վտանգավոր են այն վարորդները, որոնք մի քանի բաժակ են ալկոհոլ օգտագործել: Նրանք իրենց չեն համարում խմած եւ վստահ են, որ կարող են մեքենան վարել ավելի լավ, քան չխմած վիճակում: Չնայած, ինչպես նշում են միջազգային փորձագետները, վերջին տարիներին մահացու ելքով ճանապարհատրասնպորտային պատահարների աճի անկում է գրանցվել: Ըստ ամերիկացի փորձագետների՝ անգամ 0,10 գրամ ալկոհոլը կարող է ճակատագրական լինել:

Հոգեբանական էֆեկտները

Չափից դուրս շատ ալկոհոլ օգտագործելու դեպքում սոցիալական,

հոգեբանական եւ ֆիզիկական հետեւանքները մարդու, նրա ընտանիքի եւ հասարակության համար կարող են կործանարար լինել:

Ալկոհոլն էլ, թմրանյութի նման, կարող է առաջացնել հոգեբանական եւ ֆիզիկական կախվածություն: Բայց տարօրինակն այն է, որ հարբեցողի նկատմամբ հասարակությունն ավելի հանդուրժող վերաբերմունք է դրսեւորում, քան թմրամոլի նկատմամբ: Կարելի է ասել՝ տարբերություն չկա, բայց արի ու տես, որ խմիչքն ամենուր վաճառվում է, դրա վաճառքը օրինական է, օգտագործելը՝ ընդունելի: Հասարակական վայրերում խմելը ոչ մի պատիժ չի նախատեսում, եթե, իհարկե, հարբածը հասարակական կարգը չի խախտում, խուլիգանական արարքներ թույլ չի տալիս կամ էլ հարբած մեքենա չի վարում: Մյուս բոլոր դեպքերում օրենքը բավական հանդուժող է հարբեցողի նկատմամբ:

Նեղ անձնական շրջապատում մարդը կարող է խմել ինչքան ցանկանում է: Մյուս թմրանյութերին նման «արտոնություն» չի թույլատրվում:

Ալկոհոլի չարաշահման հետեւանքները բազմազան են, եւ կարող ենք դրանք բնութագրել:

Փոքր չափաքանակի դեպքում ալկոհոլը կենտրոնական նյարդային համակարգի, արյան շրջանառության վրա բարերար ազդեցություն է թողնում, բարձրացնում է մարդու տրամադրությունը:

Իսկ ալկոհոլի չարաշահումը շարքից հանում է կենտրոնական նյարդային համակարգը: Այն պարզապես կործանարար ազդեցություն ունի մարդու բնավորության, խոսքի, պահվածքի, վարքի վրա: Վատթարանում է նյարդամկանային համակարգի կոորդինացիան, տեսողությունը, մարդը սկսում է շուտ հոգնել եւ ցավեր է ունենում:

Ալկոհոլի ազդեցությամբ մարդը դառնում է ինքնավստահ եւ անվախ, հաճախ՝ անխելքության աստիճանի: Եվ կարեւոր չէ՝ որքան ալկոհոլ է օգտագործել, հաճախ մեկ կամ երկու բաժակը կարող է անդառնալի հետեւանքներ ունենալ:

Նախ հասկանանք՝ ով է ալկոհոլային կախվածությամբ տառապող անձը: Առաջին հերթին պետք է հիշենք, որ նա մարդ է, եւ միջավայրը պետք է շարունակի նրա մեջ մարդ տեսնել: Ի տարբերություն թմրամոլների՝ շրջապատն ավելի հանդուրժող է հարբեցողի հանդեպ:

Պետք չէ նաեւ մտածել, որ հարբեցողությամբ զբաղվում են միայն թույլ մարդիկ: Բանն այն է, որ ալկոհոլն էլ, թմրանյութի նման, ճնշում է կամքի ուժը եւ ստիպում իր միջոցով լուծել բազմաթիվ խնդիրներ: Լինում է նաեւ հակառակը՝ ալկոհոլի պատճառով անձը կանգնում է բազմաթիվ խնդիրների առաջ:

Շարունակելի

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Զվարճալի ամփոփագիր

Ձիով քայլ

Գիշերը 35-ամյա մի տղամարդ, վարելով «Օպել Զաֆիրա»-ն, Երեւան-Սեւան ճանապարհին բախվել է երթեւեկելի գոտում հայտնված ձիուն, որից հետո «ՎԱԶ-2112» մի մեքենա եւս բախվել է նույն ձիուն ու շրջվել, ինչի հետեւանքով վերջինս (ամենայն հավանականությամբ՝ խոսքը ձիու մասին չէ) մարմնական վնասվածքներով տեղափոխվել է «Հրազդան» բժշկական կենտրոն: Միջադեպը, սակայն, սրանով էլ չի ավարտվել. ձին դիմադրում էր: Նույն ուղղությամբ ընթացող մի «Նիսան» մեքենայի 51-ամյա վարորդ ձիու հետ բախումից խուսափելու համար մեքենան դուրս է բերում ճանապարհի երթեւեկելի գոտուց եւ բախվում ծառերին:

Շախմատային լեզվով ասած՝ շախ եւ մատ:

Նշանածը

Ոստիկանության բաժնում ստացվել է 35-ամյա մի կնոջ դիմում, որի մեջ մանրամասն նկարագրել է գլխին եկածը: Դիմումից պարզ է դառնում, որ կնոջ նշանածը, նրա վստահությունը չարաշահելով, 2018 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրենից պարտքով վերցրել է 1 միլիոն 382 հազար դրամ, մոտ 300 հազար դրամ արժողության ոսկյա զարդեր, ինչպես եւ այս տարվա մարտի 8-ին, անտեսելով օրվա խորհուրդը, իր բնակարանում դիտավորությամբ վնասել է իր «Պրեստիժիո» բջջային հեռախոսը եւ վերարկուն՝ պատճառելով 70 հազար դրամի վնաս, վնասելով նաեւ կնոջ «պրեստիժը»:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ պարզելու. այս ամենից հետո կինը հետ տվե՞լ է արդյոք նշանի մատանին:

Անչափահասը հայ էր

«Սեւան» բժշկական կենտրոնից հաղորդում է ստացվել, որ «սուր ալկոհոլային թունավորում, ծանր աստիճանի» ախտորոշմամբ բուժօգնության է տեղափոխվել Ռուսաստանի Դաշնության անչափահաս քաղաքացի, 15-ամյա մի պատանի:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ տղան թունավորվել է լճափի հանգստյան գոտում՝ մի բաժակ օղի խմելու հետեւանքով: Ընդամենը՝ մի բաժակ:

Քաղաքացիությունը, փաստորեն, կապ չունի, տղան հայ է:

Համբերության բաժակը դանայան տակառ չէ

Ոստիկանության բաժնում 29-ամյա մի կին հաղորդում է տվել, որ տանը վիճաբանելիս 57-ամյա սկեսրայրը սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել իր հասցեին՝ հերիք չէ, նաեւ ի լուր աշխարհի հայտարարել է, թե ինքն անբարոյական է:

Դասական, ավանդույթային հարված՝ գոտկատեղից ներքեւ...

Կգնեմ, կվաճառեմ, վարձով կտամ

Ոստիկանությունում հաղորդում է ստացվել 26-ամյա մի երիտասարդից, որ Հանրապետության հրապարակում իր տեսախցիկն ու օբյեկտիվը վարձակալությամբ տվել է 40-ամյա ծանոթին, որը դրանք յուրացրել է, եւ հիմա սոցկայքում հանել է վաճառքի:

Քրեական հետախույզները կանխել են համացանցային վաճառքը. բերման ենթարկված քառասնամյա տղամարդը տվել է խոստովանական բացատրություն եւ ներկայացրել տեսախցիկն ու օբյեկտիվը:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ սեպտեմբերի 5-ից 12-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 28 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր սպանության, պաշտոնատար անձի կոչումը կամ իշխանությունն ինքնակամ յուրացնելու եւ ինքնիրավչության, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, 1-ը՝ անառակաբարո գործողությունների, 2-ը՝ խարդախության, 1-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու եւ ինքնիրավչության, 1-ը՝ կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելու, պահելու կամ իրացնելու, 1-ը՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու կամ այդ անձի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելու կամ խուսափելու, 1-ը՝ խուլիգանության, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելուն հանցակցելու, 1-ը՝ ծառեր, թփեր եւ բուսածածկը ապօրինի հատելու կամ ծառերը, թփերն առանց թույլտվության տեղափոխելու, 1-ը՝ ինքնիրավչության, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 5 հետախուզվող:

Արձանագրվել է 96 ճանապարհատրանսպորտային պատահար. 8 մարդ զոհվել է, 133-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 21 դեպք. 1 մարդ զոհվել է, 21-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Սեպտեմբերի 8-ին Երեւանի Արշակունյաց եւ Բագրատունյաց պողոտաների խաչմերուկում «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 38-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 9-ին Երեւանի Աբովյան փողոցում իրար են բախվել «Կիա» եւ երկու «Հոնդա» մակնիշի ավտոմեքենաներ. «Հոնդա»-ների 27 եւ 33-ամյա ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 9-ին Երեւանի Վաղարշյան փողոցում իրար են բախվել «Մերսեդես Բենց» եւ «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենաներ. վարորդները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 9-ին Երեւանի Մոնթե Մելքոնյան փողոցում «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենան բախվել է կայանված «Մերսեդես» ավտոմեքենայի. 38-ամյա վարորդը եւ 19-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 9-ին Արմավիրի մարզի Արշալույս գյուղում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան բախվել է կայանված «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենայի. «Մերսեդես»-ի 51-ամյա վարորդը եւ 54-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 9-ին Երեւանի Բագրատունյաց պողոտայում իրար են բախվել «ՎԱԶ-2107» եւ «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենաներ. «ԲՄՎ»-ի 32-ամյա վարորդը եւ երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 9-ին Երեւանի Դրոյի փողոցում «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենան վրաերթի է ենթարկել 44-ամյա քաղաքացու, ապա բախվել կայանված «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի. վրաերթի ենթարկված քաղաքացին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 10-ին Երեւանի Չարենցի փողոցում իրար են բախվել «Տոյոտա» եւ «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ, այնուհետեւ «Օպել»-ը բախվել է կայանված «Սուբարու»-ին. «Օպել»-ի 33-ամյա վարորդը եւ «Տոյոտա»-ի ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 10-ին Երեւանի Չարենցի փողոցում իրար են բախվել «Նիսան» եւ «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենաներ, այնուհետեւ «Ֆոլքսվագեն»-ը բախվել է կայանված «Մերսեդես»-ին. «Ֆոլքսվագեն»-ի 27-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 10-ին Երեւանի Հալաբյան եւ Արզումանյան փողոցների խաչմերուկում իրար են բախվել երկու «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. մեքենաներից մեկի 36-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 10-ին Երեւանի Արզումանյան փողոցում իրար են բախվել «Մերսեդես» եւ «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենաներ. «Ֆոլքսվագեն»-ի 70-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 10-ին Մասիս քաղաքի Երեւանյան փողոցում իրար են բախվել «Օպել Աստրա» եւ «Օպել Վեկտրա» մակնիշի ավտոմեքենաներ. վարորդները եւ «Օպել Վեկտրա»-ի 43-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Սկիզբը՝ նախորդ համարում

«Սպանություն հաճույքի համար»

Թիվ 1 կասկածյալը

Չիկագոյի ոստիկանությունը քրքրեց բոլոր պահեստները, բոլոր ֆաբրիկաները: Անհանգստանալով իր «բիզնեսի» համար՝ Չիկագոյի մաֆիայի «կնքահայր» Ալ Կապոնեն եւ կազմակերպված հանցավորության մյուս պարագլուխները ոստիկանությանը իրենց օգնությունն առաջարկեցին մարդասպանի որոնումներում: Ռիչարդ Լեբն էլ միացավ քաղաքացիներին, որոնք արձագանքել էին ոստիկանությանն օգնելու կոչին: Ոստիկաններից մեկը լսել էր, թե ինչպես Լեբն ասաց. «Դա կարող էր անել մեզնից յուրաքանչյուրը»: Մեկ այլ ոստիկանի ասել էր. «Եթե պիտի ընտրեի որեւէ մեկին՝ առեւանգելու կամ սպանելու համար, հենց դրա նմանին կընտրեի»:

Հաջորդ օրերին «գերմարդիկ» հասկացան, որ իրենց «անխոցելի ծրագիրը» փուլ է գալիս: Մերձքաղաքային ջրամբարներից մեկում ոստիկանները հայտնաբերեցին գրամեքենայի շրջանակը, որի տառատեսակը համընկնում էր փրկագնի պահանջով տեքստի տառատեսակին: Բացի այդ, ջրատար խողովակի կողքին հայտնաբերվեց արյունոտ դուրը:

Գտնվեց հանցագործության եւս մեկ իրեղեն ապացույց. Բոբիի դիակի մոտ ակնոց էր հայտնաբերվել: Լեոպոլդն այն կորցրել էր սպանված տղայի մարմինը խողովակը խցկելիս: Չիկագոյի օպտիկայի խանութում այդպիսի ընդամենը երեք ակնոց էր վաճառվել. մեկը՝ մի կնոջ, որը հենց այդ ակնոցով էր, երբ ոստիկանները ծեծեցին դուռը, մյուսը՝ մի հարուստ փաստաբանի, որն այդ ժամանակ Եվրոպայում էր: Այսպիսով, Նաթան Լեոպոլդ-կրտսերը դարձավ թիվ 1 կասկածյալը:

Հետաքննություն

Լեոպոլդը ոստիկաններին դիմավորեց վիրավորված անմեղություն խաղալով: Իր ասելով՝ մի շաբաթ առաջ գնացել էր այդ վայրում զբոսնելու ու կորցրել էր ակնոցը: Ոստիկանությունը դեռեւս հակափաստարկներ չուներ. վերջին օրերին ուժեղ անձրեւ էր, եւ ակնոցի վրա որեւէ հետք չէր մնացել: Սակայն հանցագործն անսպասելի նյարդայնացավ ու գոռաց. «Ի՞նչ իմաստ ուներ նրան սպանելը, եթե փողի կարիք չունեմ: Հայրս հարուստ մարդ է: Եթե գումար պետք լիներ, միակ բանը, որ պիտի անեի, հորս դիմելն էր»: Լեոպոլդն ավելացրեց, որ ինքն ու Լեբը այդ երեկո ավտոմեքենայով զբոսնել են երկու աղջիկների հետ, որոնց ճանաչում են որպես Էդնա ու Մերի:

Երիտասարդներին տեղավորեցին «Լա սոլ» հյուրանոցի առանձին համարներում: Դա շրջանային դատախազի որոշումն էր: Չնայած երիտասարդները պաշտոնապես կալանավորված չէին, դատախազը կանխազգացում ուներ, որ հենց նրանք են, ում որոնում է ոստիկանությունը...

«Հիմա վերջապես նրանց կբռնենք...»

Ոստիկանությունը կասկած չուներ, որ փրկագնի պահանջով նամակը գրվել է իրենց տրամադրության տակ գտնվող գրամեքենայով: Իսկ հետո հայտնվեց ծանրակշիռ հանցանշանը Լեոպոլդի ու Լեբի դեմ. պրպտուն լրագրողները գտան նամակներ, որոնք համալսարանում սովորելիս Լեբը մեքենագրել էր այդ գրամեքենայով: Անկախ փորձագետները հաստատեցին տառատեսակների նույնականությունը: Նոր հանցանշաններից ոգեւորված դատախազը հայտարարեց. «Հիմա վերջապես նրանց կբռնենք»: Լեոպոլդը տվեց այն ուսանողի անունը, ումից, իբր, վերցրել էր գրամեքենան: Ուսանողին արագ գտան. նա անմեղ էր:

Լեոպոլդը շարունակում էր դուրս պրծնելու փորձերը: Ոստիկանություն հրավիրվեց գարաժի վարիչը, որտեղից նա վարձույթով մեքենա էր վերցրել: Վարիչը հայտարարեց, որ մեքենան, որով երիտասարդները իբր զբոսնել էին ինչ-որ խորհրդավոր աղջիկների հետ, այդ գիշեր կայանատեղից դուրս չի եկել...

Բազմաթիվ ապացույցների ճնշման տակ առաջինը «կոտրվեց» Լեոպոլդը: Շուտով հանձնվեց նաեւ Լեբը, որը հայտարարեց. «Դա կատակ էր: Մենք պարզապես ուզում էինք իդեալական սպանություն կատարել: Այդ տղայի դեմ ոչինչ չունեինք: Ցավում եմ, որ այդպես պատահեց»:

Անպատժելիություն

Չիկագոն մոլեգնում էր: Հասարակությունը մարդասպանների համար առավելագույն պատիժ էր պահանջում: Բանտում այդ երկու տականքները, որոնք իրենց գերմարդ էին երեւակայել, հայտնվեցին բորոտների վիճակում: Ոչ մի փաստաբան հանձն չէր առնում պաշտպանել նրանց. դա կարող էր ոչնչացնել ցանկացած հաջողակ կարիերա: Լեոպոլդ-ավագը ստիպված էր

տառացիորեն ծնկաչոք աղերսել նշանավոր փաստաբան Քլարենս Դարրոուին, որ ստանձնի պաշտպանությունը:

Դարրոուն հետագայում հիշում է. «Ես գիտեի, որ չի կարող խոսք լինել այդ երիտասարդներին ազատ արձակելու մասին, բայց ուզում էի առնվազն փրկել նրանց էլեկտրական աթոռից: Դա անշնորհակալ գործ էր»: Առավելագույնը, որ կարող էր հուսալ դատապաշտպանը՝ դաժան ու անիմաստ սպանություն կատարած երիտասարդների անմեղսունակությունն ապացուցելն էր:

Պայքար մարդասպանների կյանքի համար

Մարդասպաններին պաշտպանելու՝ Դարրոուի որոշմանը հասարակությունն ըմբռնումով չմոտեցավ: Մարդկանց թվում էր, որ պաշտպանական կողմը դրանով հանցանք է գործում: Քննադատության թիրախ դարձավ նաեւ դատախազությունը, քանի որ քննությունը ձգձգվում էր: Դատաքննության մասին հաշվետվությունները գրավել էին թերթերի առաջին էջերը: Այդ գործին, առանց չափազանցության, ողջ աշխարհն էր հետեւում: Դատապաշտպանի գրասենյակը հազարավոր նամակներ էր ստանում, որոնք գերազանցապես խիստ էին ու վիրավորական...

Սակայն Դարրոուն անհողդողդ էր: Ոչ մի կերպ չփորձելով մեղմել «գերմարդկանց» հանցանքը՝ նա շարունակում էր պայքարել մարդասպանների կյանքի համար: Դարրոուի՝ գթասիրտ լինելու խնդրանքը դասական է մնալու Միացյալ Նահանգների դատական պրակտիկայում. «Ես աղոթում եմ այն ժամանակի համար, երբ ատելությունն ու դաժանությունը կդադարեն թունավորել մարդկանց սրտերը, երբ կկարողանանք հասկանալ, որ նույնիսկ հանցագործը կյանքի իրավունք ունի, եւ գթասրտությունն ինչպես Աստծո, այնպես էլ մարդկային դատաստանի կարեւորագույն բաղադրիչն է»:

Դարրոուի համառությունն արդյունք տվեց: Նա կարողացավ դատարանին համոզել, որ «սկսվող պարանոյան» հանգեցրել է երիտասարդների հոգեկան աշխարհի ժամանակավոր խանգարման:

Դատաքննության երեսուներեք օրերից հետո, որին հաջորդեց երեքշաբաթյա դադարը, մինչեւ դատավճիռ կայացնելը, Դարրոուն հանդիպեց Լեբին ու Լեոպոլդին եւ հայտնեց, որ դատապարտվելու են ցմահ ազատազրկման՝ սպանության, եւ 99 տարվա ազատազրկման՝ առեւանգման համար:

Լուրեր էին պտտվում, որ պաշտպանության համար Դարրոուն մեկ միլիոն դոլար է ստացել, սակայն տարիներ անց փաստաբանն ապշեցրեց բոլորին՝ պատմելով, թե ինչ է կատարվել, երբ բանը հասել է վճարմանը: Իրականում նա ստացել էր ընդամենը երեսուն հազար դոլար: Եվ այդքանն էլ Նաթան Լեոպոլդ-ավագը դժկամությամբ էր վճարել: Չեքը փաստաբանին տալով՝ նա մեծամտորեն ասել էր. «Աշխարհը լի է նշանավոր փաստաբաններով, որոնք կվճարեին ինձ՝ իրենց արվեստն այսպիսի շահավետ գործում ցուցադրելու հնարավորության համար»:

Բանտում Լեբն ու Լեոպոլդը, շնորհիվ իրենց հայրերի, ոչնչի պակաս չէին զգում: Նրանք ճոխ կյանք էին վարում ճաղավանդակներից այն կողմ: Մարդասպանները կից խցեր էին զբաղեցնում, որտեղ գրքեր կային, գրասեղաններ, փաստաթղթերի պահարաններ: Պահնորդության միջոցով նրանց ոգելից խմիչք էին հասցնում, թույլատրված էին հեռախոսային խոսակցությունները: Լեոպոլդը բանջարեղեն էր աճեցնում, իսկ Լեբը գլխովին թաղվել էր անառակության մեջ՝ երիտասարդ կալանավորներին դրդելով հագուրդ տալ իր սեռական հակումներին, կաշառելով վերակացուներին, որ չխանգարեն իր զվարճանքները:

Հատուցում

1936 թվականին Լեբն աչք դրեց երիտասարդ կալանավոր Ջեյմս Դեյի վրա: Նա գրադարանում մոտեցել էր Դեյին ու առաջարկել. «Իմը եղիր»: Դեյը հրաժարվել էր, սակայն Լեբը հետապնդում էր նրան: Մի անգամ ածելին ձեռքին մտավ լոգարան ու կրկին սկսեց իրենը պահանջել: Դեյը նորից մերժեց: Կռիվ սկսվեց, եւ ածելին հայտնվեց զոհի ձեռքին: Կատաղությունից խելագարված Դեյը տառացիորեն ծվեն-ծվեն արեց Լեբին՝ 56 հարված հասցնելով, որոնցից մեկը մահացու էր:

Լեբի հանցակիցը բանտում մնաց 34 տարի եւ ներում ստացավ 1958-ին: Կալանավայրից դուրս գալուց հետո Նաթան Լեոպոլդը մամուլի ասուլիս հրավիրեց ու հանդես եկավ հայտարարությամբ. «Ես կոտրված, ծեր մարդ եմ: Կուզեի քավել մեղքս՝ օգնելով մարդկանց»:

Նա մեկնեց Լատինական Ամերիկայի կղզի-պետություններից մեկը ու տեխնիկի աշխատանք գտավ եկեղեցական լաբորատորիայում՝ շաբաթական 10 դոլար աշխատավարձով: Գիրք գրեց՝ «Կյանք գումարած 99 տարի»: Երբ հարցրել էին՝ երբեւէ մտածո՞ւմ է դժբախտ Բոբի Ֆրենքսի մասին, Լեոպոլդը պատասխանել էր. «Այդ մտքերը թունավորում են իմ կյանքը: Ուրիշ ոչնչի մասին մտածել չեմ կարողանում»:

1971 թվականի օգոստոսի 30-ին Նաթան Լեոպոլդը սրտի անբավարարությունից վախճանվեց Պուերտո Ռիկո կղզում...

Լեբի ու Լեոպոլդի հանցագործությունը ամերիկյան քրեագիտության պատմության մեջ մտավ որպես, այսպես կոչված, դրդապատճառ չունեցող սպանություն, որը կատարվել էր «գերմարդության» հիմքի վրա: Դժբախտաբար, գանգստերական ավանդույթներով հայտնի Չիկագոյում իրենց «գերմարդ» երեւակայած պատանյակները հետեւորդներ ունեցան Ատլանտյան օվկիանոսի երկու կողմերում:

Ֆրիդրիխ Նիցշեի գաղափարներն առանձնակի ավերիչ ազդեցություն ունեցան հատկապես նրա հայրենիքում, որտեղ հոգեպես անառողջ մարդու պարադոքսային մտածողությունը դրվեց նացիզմի գաղափարախոսության ու գործի հիմքում: Այն, ինչ ամերիկյան արդարադատությունը չկարողացավ ներել երկու պատանի տխմարներին, որոնք ուրիշի կյանքը տնօրինելու իրավունք էին վերապահել իրենց, դարձավ Եվրոպայի խոշորագույն երկրներից մեկի պետական քաղաքականության հիմքը: Մարդկությունը միլիոնավոր մարդկանց կյանքի գնով վճարեց «ռասայական գերազանցության» մարդակեր տեսության համար, որը ոչնչացման էր դատապարտել ժողովուրդների:

Իրավացիորեն 20-րդ դարի ժանտախտ անվանված այդ խելահեղության վերջը դրվեց գերմանական նացիզմի ջախջախումով եւ Երկրորդ համաշխարհային պատերազմում տարած պատմական հաղթանակով:

Անզիջում պայքարը շարունակական է

«Կանեփ-կակաչ-2019» համալիր օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումն ավարտվեց օգոստոսի 30-ին: Միջոցառումն անցկացվում է ամեն տարի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Նուրջ մեկ ամիս տեւած միջոցառումը համակարգում էր ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչությունը:

Միջոցառման նպատակն է հանրապետության տարածքում շրջանառությունն արգելված թմրամիջոցներ պարունակող, ինչպես եւ վայրի աճած բույսերի հայտնաբերումն ու այրման միջոցով ոչնչացումը, թմրամիջոցների անօրինական շրջանառության դեպքերի կանխումը, հայտնաբերումը եւ բացահայտումը:

Օգոստոսի 5-ից 30-ը ոստիկանության գրեթե բոլոր ստորաբաժանումները մասնակցել են կանխարգելիչ միջոցառմանը: Հայտնաբերվել եւ այրման միջոցով ոչնչացվել են շուրջ 56 տոննա կանեփի եւ 42 կիլոգրամ կակաչի վայրի աճած զանգվածներ:

Հայտնաբերվել են նաեւ կանեփի մշակված բույսեր: Միջոցառման շրջանակներում իրականացված զննությունների եւ խուզարկությունների արդյունքում տնամերձ հողամասերից հայտնաբերվել է 30 հազարից ավելի կանեփի բույս:

Ապօրինի թմրաշրջանառության դեմ

ուղղված անզիջում պայքարի ընթացքում առգրավվել են մարիխուանա, ափիոն, դեզոմորֆին, մեթամֆետամին, կանեփ, հաշիշ, սուբուտեքս եւ տարբեր հոգեմետ դեղահաբեր:

Միջոցառման ընթացքում թմրամիջոցների հայտնաբերմանը զուգահեռ, բացատրական աշխատանքի շնորհիվ ոստիկանություն է հանձնվել տարբեր տեսակի զենք եւ զինամթերք:

Կամավոր հանձնվել է 3 ինքնաձիգ, 24 նռնակ, 5 պահունակ, 17 ատրճանակ, 14 հրացան, 21 պայթուցիչ, 3 արկ, 6 պայթաղյուս, 2 նռնակ, 2 հրազեն, 4 ամունալ եւ տարբեր տրամաչափի 2872 փամփուշտ:

Միջոցառման ընթացքում ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվել է ՀՀ եւ այլ երկրների քրեական օրենսգրքերի տարբեր հոդվածների հատկանիշներով հետախուզվող 77 անձ:

«Կանեփ-կակաչ-2019» համալիր օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման ընթացքում արձանագրվել է երկու հարյուրից ավելի դեպք, 33-ի կապակցությամբ հարուցվել են քրեական գործեր:

Համալիր օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումն անցկացվում է բույսերի աճի եւ զարգացման շրջանում: Թեեւ ավարտվեց «Կանեփ-կակաչ-2019» միջոցառումը, սակայն ոստիկանությունը չի թուլացնելու ապօրինի թմրաշրջանառության դեմ պայքարի տեմպը: Հանցագործությունների կանխման, նախականխման եւ բացահայտման ուղղությամբ աշխատանքները շարունակվում են:

www.police.am

Մեղրիի ոստիկանների բացահայտումը

Սեպտեմբերի 5-ին ոստիկանության Մեղրիի բաժնում մի կին հաղորդում էր տվել, որ պատուհանի ցանցը պոկել, մտել են տուն եւ ննջասենյակի զգեստապահարանից գողացել ոսկյա զարդեր, օծանելիք ու մետաղադրամներ:

Մեղրիի քրեական հետախույզները ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզեցին, որ գողությունը հնարավոր է կատարած լինի Սյունիքի մարզի Լեհվազ գյուղում ապրող մի անչափահաս, որին գողություն կատարելուն դրդել էր համագյուղացի 21-ամյա մի երիտասարդ: Նրանք հայտնաբերվել են:

Կատարվում է քննություն:

Փորձել էր կողոպտել օտարերկրացու

Սեպտեմբերի 6-ի երեկոյան ոստիկանության ՔՀԳՎ ծառայողները, Կենտրոնական բաժնի քրեական հետախույզների հետ համատեղ, Երեւանի Թումանյան փողոցից, կողոպուտի փորձ կատարելու կասկածանքով, բերման են ենթարկել Գյուլիքեւխյան փողոցի 52-ամյա մի բնակչի:

Պարզվել է, որ նույն օրը, ժամը 20.30-ի սահմաններում, նույն փողոցի բացօթյա ռեստորանի սեղանից փորձել է հափշտակել ՌԴ քաղաքացուհու դրամապանակը, սակայն գործն ավարտին չէր հասցրել. ոստիկանները բռնել էին:

Նախապատրաստվում են նյութեր:

Գողության դեպքեր են բացահայտվել

Օրերս Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գողության դեպքեր արձանագրվեցին: Գաղտնի հափշտակությունները կատարվել էին վարչական շրջանի երկու բժշկական կենտրոնից, խանութներից ու մի քաղաքացու «Օպել»-ից:

Ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի քրեական հետախույզները հանցագործությունները բացահայտելու ուղղությամբ ձեռնարկած միջոցառումների ընթացքում պարզեցին, որ գողությունները կատարել է նույն անձը:

Սեպտեմբերի 4-ին կասկածվողը հայտնաբերվեց Արարատի մարզի Արբատ գյուղում ու բերման ենթարկվեց բաժին: Նա տվել է խոստովանական բացատրություն:

Կատարվում է քննություն:

Վիճաբանություն Հացիկ գյուղում

Սեպտեմբերի 5-ին հիվանդանոցից ոստիկանության Արմավիրի բաժին հաղորդում էր ստացվել, որ մարմնական վնասվածքներով բուժօգնության են դիմել 65-ամյա եւ 21-ամյա տղամարդիկ եւ հայտնել, որ վնասվածքները ստացել են Հացիկ գյուղում՝ վիճաբանության ժամանակ:

Մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ 49-ամյա հարեւանն է ծեծի ենթարկել 65-ամյա տղամարդուն:

Նույն օրը հաղորդում է տվել արդեն հարեւանը՝ հայտնելով, որ վիճաբանության ժամանակ 65-ամյա տղամարդու 21-ամյա որդին դանակով տվել է սպանության սպառնալիքներ, ապա կոտրել տան դիմաց կայանված իր «ՎԱԶ-2106»-ի կողային ապակիները, վնասել դուռը՝ պատճառելով գույքային վնաս:

Նախապատրաստվում են նյութեր:

Կնայտնաբերվի նաեւ գողոնը

Սեպտեմբերի 1-ին ոստիկանության Մաշտոցի բաժին էր ահազանգել մայրաքաղաքի ուսումնական կենտրոններից մեկի անվտանգության աշխատակիցը եւ հայտնել, որ կենտրոնի տարածքում գողություն է կատարվել:

Մեկնած օպերատիվ խմբի ծառայողները հանցագործության վերաբերյալ հաղորդում ընդունեցին, ուսումնասիրեցին տարածքը տեսահսկող սարքերի տեսագրությունները:

Արարքը կատարած անձանց ինքնությունը պարզելու եւ նրանց հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների շնորհիվ դեպքի հաջորդ օրը Մաշտոցի քրեական հետախույզներն ու հետաքննության բաժանմունքի ծառայողները օպերատիվ տեղեկություններ ստացան: Դրանց հիման վրա ձեռնարկված միջոցառմամբ, գողությունը կատարելու կասկածանքով, ոստիկանության Մաշտոցի բաժին բերման ենթարկված 31, 30 եւ 27-ամյա երեք տղամարդիկ խոստովանական բացատրություններ տվեցին:

Հարուցվել է քրեական գործ:

Քննությունը շարունակվում է:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Հրձիգը հայտնաբերվեց

Օգոստոսի 29-ի գիշերը ոստիկանության Մաշտոցի բաժին ահազանգած քաղաքացին հայտնում էր, որ այրել են բակում կայանված իր ավտոմեքենան:

Մեկնած օպերատիվ խմբի ծառայողները դեպքի վայրում հայտնաբերեցին բենզինի եւ այլ դյուրավառ նյութի երեք շիշ: Քաղաքացիներն այրվող «Օպել»-ը մարել էին իրենց ուժերով:

Ոստիկանները օպերատիվ-հետախուզական եւ որոնողական միջոցառումներ ձեռնարկեցին:

Սեպտեմբերի 2-ին քաղաքացին կրկին ոստիկանություն ահազանգեց: Այս անգամ անհայտ անձը հրկիզել էր տան մուտքի դուռը:

Շարունակելով կատարվածը բացահայտելուն ուղղված միջոցառումները՝ Մաշտոցի քրեական հետախույզները օպերատիվ տեղեկություններ ստացան, որ արարքը հնարավոր է կատարած լինի Արմավիրի մարզի Ֆրառատ գյուղի 47-ամյա բնակիչը: Շուտով նա հայտնաբերվեց եւ, դիտավորությամբ ուրիշի գույքը վնասելու կասկածանքով. բերման ենթարկվեց ոստիկանության Մաշտոցի բաժին:

Տղամարդը խոստովանական բացատրություն է տվել:

Կատարվում է քննություն:

Կարգազանց վարորդները հայտնաբերվեցին

Օգոստոսի 31-ին համացանցում տեսագրություն էր հայտնվել. «Ֆոլքսվագեն» մակնիշի մեքենայի վարորդը Կոմիտասի պողոտայում թույլ էր տալիս ճանապարհային երթեւեկության կանոնների կոպիտ խախտումներ՝ դուրս էր եկել հանդիպակաց երթեւեկելի գոտի եւ վտանգել երթեւեկության մասնակիցների կյանքն ու առողջությունը:

Ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները, ուսումնասիրելով տեսագրությունը, պարզեցին վարորդի ինքնությունը եւ նրան ներկայացրին բաժին: Մեքենան հայտնաբերվեց Տավուշի մարզում եւ տեղափոխվեց ոստիկանության Իջեւանի բաժնի պահպանվող հատուկ տարածք:

Վարորդի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն:

Սեպտեմբերի 3-ին նույնպես համացանցում տեսագրություն էր հրապարակվել, ուր երեւում է, թե ինչպես է «BMW» մակնիշի մեքենայի վարորդը մայրաքաղաքի Դավիթ-Բեկի փողոցում վարում հանդիպակաց երթեւեկելի գոտիով ու վրաերթի ենթարկում մի կնոջ՝ հեռանալով դեպքի վայրից: Նախքան տեսագրության հրապարակումը՝ կատարվածի վերաբերյալ ոստիկանությունում ահազանգ էր հնչել եւ ճանապարհային ոստիկանության Երեւանը սպասարկող 1-ին սպայական գումարտակի հետախուզության խմբի ծառայողները դեպքից րոպեներ անց հայտնաբերել էին «BMW»-ն ու վարորդին:

Մեքենան տեղափոխվել է ճանապարհային ոստիկանության պահպանվող հատուկ տարածք: Վրաերթի ենթարկված կինը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Կատարվում է քննություն:

Վերստին հորդորում ենք՝ խստագույնս պահպանել ճանապարհային երթեւեկության կանոնները. դա բխում է բոլորիս շահերից: Ցանկացած օրինախախտում բացահայտվելու է նաեւ մեր իրավագիտակից քաղաքացիների օգնությամբ, ինչպես այս դեպքերում:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Անհրաժեշտ մանրուքներ՝ մեծ ճանապարհին

Ավտոմեքենան շահագործելիս հաճախ են պատահում չնախատեսված իրավիճակներ, որոնցից կարելի է խուսափել որոշ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելով: Իսկ եթե, այնուամենայնիվ, փոքրիկ փորձանքը չշրջանցի ձեզ, պետք չէ հուսահատվել. դրանք վերացնելու հազար ու մի միջոց կա՝ մասնագիտական միջամտությունից մինչեւ «ավանդական դեղատոմսեր»:

Կներկայացնենք փորձաշատ վարորդների խորհուրդներն ու առաջարկները, որոնք թեեւ գիտականորեն չեն հաստատվել, սակայն կյանքում ապացուցել են իրենց պիտանիությունը:

Ամեն անգամ լքելով կայանատեղին, նայեք՝ արդյո՞ք ձեր մեքենայից որեւէ բան չի հոսել կամ թափվել: Հատկապես այս խորհուրդը արդիական է հին մեքենաների տերերի համար:

Ինչ խոսք, հաճելի է մեքենա վարելուն զուգահեռ երաժշտություն լսել, սակայն ժամանակ առ ժամանակ զրկեք ձեզ այդ հաճույքից եւ ականջ դրեք՝ անծանոթ ձայն չի՞ լսվում շարժիչից եւ ընթացային մասից, չե՞ն սուլում կամ քերող ձայն արձակում արգելակները:

Այս ախտորոշիչ միջոցառումն ավելի նպատակահարմար է կազմակերպել, երբ ճամփեզրին բետոնե պատնեշ կա. ձայնն այս դեպքում արձագանքում է եւ ավելի լսելի է, իհարկե, եթե պատուհանը բաց է:

Եթե մեքենայի մեղմիչները շարքից դուրս են եկել, եւ ինչ-որ պատճառով դրանց փոխարինումը կամ նորոգումը ստիպված եք հետաձգել, ապա հիշեք, որ անսարք մեղմիչներով մեքենան դժվար կառավարելի է, եւ առավելագույն արագությունը նման պայմաններում չպետք է գերազանցի 80 կմ/ժամը. անսարք մեղմիչների դեպքում էապես երկարում է արգելակման ուղին: Մեղմիչների «անգործությունը» հատկապես վտանգավոր է արգելակների հակաարգելափակող համակարգի առկայության դեպքում:

Եթե գիշերը հանդիպակաց մեքենաների լույսերը սովորականից հզոր թվան եւ կուրացնեն, ապա ներսից մաքրեք դիմապակին. եթե մեքենայում ծխում են՝ մեկ ամիս անց ապակու վրա գոյանում է թանձր շերտ, եթե չեն ծխում, ապա, միեւնույն է, այդ շերտը գոյանում է պլաստմասսե դետալների տաքանալու հետեւանքով առաջացած գազերի հաշվին:

Որքան թեթեւ ու փոքր է բանալիների կախազարդը, այնքան երկար ու անխափան կաշխատի վառման փականը:

Իսկ եթե բանալուց մշտապես կախված են բազմաթիվ այլ բանալիներ, ապա շուտով փականի անցքն այնքան կմեծանա, որ հնարավոր կլինի գործածել այդ օտար բանալիներից որեւէ մեկը:

Չփորձեք արտասահմանյան ծագմամբ մեքենայի վրա, թեկուզ ժամանակավոր, տեղադրել ռուսական ծխախոտավառիչ. այն չի ծառայի իր նպատակին, եւ ակնթարթորեն կայրվի ապահովիչը:

Եթե ճանապարհին խնդրեն մեկ այլ մեքենա գործի դնել ձեր մեքենայի էլեկտրականության հաշվին, ապա շարժիչը ցանկալի է անջատել, որ գեներատորը շարքից դուրս չգա:

Իսկ եթե նման իրավիճակում ինքներդ հայտնվեք, լարի մի ծայրը միացրեք մարտկոցի + բեւեռին, մյուսը՝ թափքին, այդպիսով՝ եթե նույնիսկ շփոթեք լարերը, էլեկտրական սարքավորումները շարքից դուրս չեն գա: Եթե ձեր մեքենայի շարժիչը դիզելային է կամ բենզինային, բայց բարակ են ուրիշի մեքենայի էլեկտրականությունից սնվող լարերը, ապա դժվար թե հաջողվի շարժիչը գործի դնել ստարտերի միջոցով: Նման պարագայում ավելի լավ է գործի դնել հարեւան մեքենան, սպասել, որ նրա գեներատորի հաշվին որոշ չափով լիցքավորվի ձեր մեքենայի մարտկոցը, այնուհետեւ դոնոր մեքենան անջատել եւ կրկին փորձել գործի դնել շարժիչը:

Հետեւեք, որ ձեռքի արգելակը մշտապես հասանելի լինի. ո՞վ գիտե, թե որ պահին նրա օգնության կարիքը կզգացվի: Իսկ ձեզ կարող է խանգարել հյութի տուփը, որ առավել հաճախ հենց ձեռքի արգելակի վրա է հանգրվանում, դա սիրելի վայր է նաեւ ուղեւորուհու պայուսակի կամ մագնիտաֆոնի պնակների համար:

Մեքենան քարշակելիս հետեւեք, որ բանալին փականի մեջ այնպիսի դիրքով լինի, որպեսզի ղեկանիվը հանկարծակի չարգելափակվի:

Հատկապես երկարատեւ ճամփորդության ժամանակ խլացուցիչը բավական տաքանում է, երբեմն՝ շիկանում, ուստի կայանելուց առաջ հետեւեք, որ մեքենայի տակ չոր խոտ կամ թղթի կտորներ չլինեն, հակառակ դեպքում հրդեհն անխուսափելի է: Սա վերաբերում է հատկապես ցածր մարդատար մեքենաներին:

Ցուրտ եղանակին, տեւական ժամանակ կայանելուց հետո, հնարավոր է, որ ապակեմաքրիչները սառչեն ու կպչեն ապակուն: Նման մտավախության դեպքում կարելի է դրանք հանել, լծակի տակ ինչ-որ բան դնել ապակու հետ չշփվելու համար եւ առավոտյան միայն ապակեմաքրիչները տեղադրել:

Աշխատեք մեքենան չկայանել ծառերի, լարերի եւ բազմահարկ շենքերի տակ. ծառերից մեքենայի վրա ճյուղեր ու տերեւներ կընկնեն, որոնք խոնավ եղանակին հետքեր կարող են թողնել, էլ չենք խոսում թռչունների մասին: Եվ դժվար է կանխատեսել, թե տվյալ բազմահարկի բոլոր բնակիչները կիրթ մարդիկ են, բոլոր բնակարաններում երեխաները ծնողների ուշադրության կենտրոնում են, եւ նրանցից ոչ մեկը պատուհանից որեւէ իր չի շպրտի:

Հիշեք, որ կոնդիցիոների աշխատանքի ժամանակ վառելիքի ծախսը 10%-ով ավելանում է:

Սակայն եթե տապին խնայողության համար չմիացնեք հովացուցիչը, փոխարենը՝ բավարարվեք ապակիները բացելով, ապա խնայողության մասին խոսելն ավելորդ է, քանզի այս դեպքում արագության հետ մեծանում է մեքենայի դիմադրությունը. գործում է աերոդինամիկայի օրենքը:

Մեքենայում հնարավորության դեպքում իրեր մի թողեք, առավել եւս՝ պայուսակներ ու դրամապանակ. եթե նույնիսկ դրանց մեջ ընդամենը բուտերբրոդ է, ապա այդ մասին միայն դուք գիտեք, իսկ դրա պատճառով զուր տեղը կկոտրեն դռան փականը կամ ապակին:

Մեքենայի տանիքին ամրացված ցանկացած իր՝ բեռնախուց, դահուկներ կամ լրացուցիչ լապտերներ, կավելացնի վառելիքի ծախսը, ընդ որում՝ որքան արագ ընթանաք, այնքան ծախսը կմեծանա:

Ձեր հեռահար լույսերը կարող են խանգարել ոչ միայն հանդիպակաց, այլեւ առջեւից երթեւեկող մեքենայի վարորդին:

Մեքենայի շարժիչը մի տաքացրեք ավտոտնակում. մեծ է արտանետվող գազերից թունավորվելու հավանականությունը:

Հայտնաբերվել են հետախուզվողներ

Սեպտեմբերի 6-ին ոստիկանության ՔՀԳՎ ծառայողները, Մալաթիայի բաժնի քրեական հետախույզների հետ, ստացված տեղեկություններն իրացնելով Գարեգին Նժդեհի հրապարակից բերման են ենթարկել Չեխովի փողոցի 59-ամյա մի բնակչի, որը սեպտեմբերի 5-ից ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից հետախուզվում էր ինքնիրավչության մեղադրանքով:

◆

Սեպտեմբերի 5-ին ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի ՔՀԲ ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ Մոսկվա-Երեւան ինքնաթիռի ժամանումից հետո օդանավակայանի ժամանման սրահից բերման է ենթարկվել 58-ամյա Արամ Ա.-ն, որը հետախուզվում է ՌԴ Նիժեգորոդսկոյի ԱԱԾ կողմից՝ ՌԴ քրեական օրենսգրքի 199 հոդվածի (կազմակերպությունների կողմից վճարվող տուրքերից, հարկերից եւ ապահովագրավճարներից խուսափելը) մեղադրանքով:

◆

Սեպտեմբերի 5-ին ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի ՔՀԲ ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ Երեւան-Մոսկվա չվերթի ինքնաթիռի հաշվառումից հետո գծային բաժին բերման է ենթարկվել 56-ամյա Աշոտ Ս.-ն, որը 2018 թ. հոկտեմբերից հետախուզվում էր Ղրղզստանի Հանրապետության հարկային ոստիկանության կողմից, Ղրղզստանի քրեական օրենսգրքի 221 հոդվածի 2-րդ մասի (հարկատուի բանկային եւ առեւտրային գաղտնիքի հրապարակումը) մեղադրանքով:

◆

Սեպտեմբերի 5-ին ոստիկանության Մաշտոցի բաժնի քրեական հետախույզների եւ ԱՎՎ Մաշտոցի անձնագրային բաժանմունքի ծառայողների անցկացրած բացատրական աշխատանքների շնորհիվ ոստիկանության Մաշտոցի բաժին է ներկայացել 23-ամյա Մինաս Ք.-ն, որը ՌԴ ՆԳՆ Սեւաստոպոլ քաղաքի Գագարինսկի ՆԳԲ-ի կողմից հետախուզվում էր ՌԴ քրեական օրենսգրքի 114-րդ հոդվածի (մարմնական վնասվածքը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Գուգարքի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում սեպտեմբերի 8-ին Կոտայքի մարզի Գեղաշեն գյուղից ոստիկանության Գուգարքի բաժին բերման է ենթարկվել 49-ամյա Համլետ Ա.-ն, որը ոստիկանության Գուգարքի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 142 հոդվածի (անառակաբարո գործողությունները) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի քրեական հետախույզները, իրացնելով ստացված օպերատիվ տվյալները, սեպտեմբերի 7-ին Երեւանի Նոր Արեշի 4-րդ փողոցից բերման են ենթարկել 43-ամյա Ռոստոմ Ս.-ին, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 117 հոդվածի (դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելը) մեղադրանքով:

◆

Սեպտեմբերի 7-ին ոստիկանության ՔՀԳՎ ծառայողները, Չարբախի բաժանմունքի քրեական հետախույզների հետ օպերատիվ տվյալներն իրացնելով, Շիրակի փողոցի «Հայփոստ» ՓԲԸ սրահից բերման են ենթարկել նույն փողոցի 26-ամյա մի բնակչի, որը հետախուզվում էր իրացնելու նպատակով ապօրինի թմրաշրջանառությանը հանցակցելու մեղադրանքով:

Ոստիկանները բացահայտել են դանակահարությունը

Սեպտեմբերի 2-ին, ժամը 13-ի սահմաններում, ոստիկանության Արտաշատի բաժնում հիվանդանոցից հաղորդում էր ստացվել, որ որովայնի կտրածծկած արնահոսող վերքով բուժօգնության է դիմել Դիտակ գյուղի 29-ամյա մի բնակիչ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում իրավապահները պարզեցին, որ նրան Արեւշատ գյուղի գերեզմանատանը, գումարային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ, դանակահարել է Երեւանի Արտաշիսյան փողոցի 27-ամյա մի բնակիչ:

Սեպտեմբերի 8-ին համալիր որոնողական աշխատանքների արդյունքում կասկածվողը Արագածոտնի Ուշան գյուղում հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց ոստիկանության Արտաշատի բաժին:

Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

Հանգամանքները պարզվում են:

Քննությունը շարունակվում է:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Խարդախության դեպքեր են բացահայտվել

Սեպտեմբերի 5-ին ոստիկանության Կենտրոնական բաժնի Մարաշի բաժանմունքի քրեական հետախույզները, իրացնելով ստացված օպերատիվ տվյալները, հայտնաբերել ու, խարդախություններ կատարելու կասկածանքով, բերման են ենթարկել մի օտարերկրացու:

Նախնական տվյալներով՝ տղամարդը մի քաղաքացուց 22 հազար դոլար էր վերցրել օտարերկրա պետության մուտքի արտոնագիր տրամադրելու պատրվակով ու խաբեությամբ տիրացել: Նույն պատրվակով 4000 դոլար էր վերցրել մեկ այլ անձից: Բացի այդ, օտարերկրյա պետության անձնագիր վերականգնելու պատրվակով մի տղամարդուց վերցրել է 300 հազար դրամ՝ դարձյալ խաբեությամբ տիրանալով գումարին:

Դեպքերի առթիվ քրեական գործ է հարուցվել:

Հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:



Ռազմ. հին քառանետ գործիք
Բուդդայական կառույց
Վենեսուելա / Ֆրանս. գրող
Հայկական նոտագր. նշան
Հյուսիսային, հարավային ...
Հայ թագավոր
Սամբա / ... Կերես
Սկանդինավ. աստված
Քաղաք, Դաշտային Կիլիկիա
Անապատ
Հատապտուղ / Զգեստ
Աշակերտ. պիտույք
Ազգություն, ՌԴ / Առասպելական ձի
Ատրճանակ / Փոքր մոլորակ
Պարիսպ / Հույն փիլիսոփա
Ծանրորդի վարժություն
Հայկ. էպոսի հերոս / Ջուլհակի ձեռքին
Կոռնել, թատերգուբ. / Ամուրի վտակ
Լատինական տառ
Ամիս / «... եղբայրները»
Կռատուն / Մոմ
Լուի ...
Մատնիչ / Շախմ. աշխ. չեմպիոն
Գիշատիչ թռչուն
Հայազգի ճարտարապետ, օսմ. Թուրքիա
Շինանյութ / Ամերիկ. ֆիզիկոս
Ականատես / Քաղաք, Պերու
Սենդամթերք
Ռուս ավատատեր
Կղզի, Վեստ Ինդիա / Հայ նախարար. տոհմ
Դեմք
«Խաղաղ ամերիկացին»
... Շեուչենկո
Փոքր ռեստորան / ... Սիմոնյան
Ձմեռային օլիմպ. 1-ին մ/քաղաքը
Երկարութ. միավոր
Լողաոճ / Գյուտի վկայական
Երկնային մարմին
Թումանյան, հերոսուհի
Կմախքի մաս
Ճանապարհային ...
Խավար բանտ
... Դարագյոզյան / Անդրեյ ...
Քիմ. տարր / ... Ստրավինսկի
Սոկրատեսյան դպրոց
Աչքի հիվանդություն
Ծնողազուրկ
«Գանձերի կղզին»
Հավատ եւ պաշտամունք
Գինի / Պայթուցիկ խառնուրդ
Կատվազգի կենդանի
Մեխանիկա / ... Վեսպուչի
Պայծառ
Թանկարժեք քար
Նախահայր
Անցյալի գյուղ. գործիք
Լերմոնտով, բանաստեղծութ. / Մագմա
Պիթոն, բոա / Գետ, Ռուսաստան
«Տիկին ...» / Ոստ / Գերման, երգահան
Չուկ
Ուժի միավոր / Ֆրանս. նկարիչ
Նահանջ ...
Ընդեղեն
Գործող հրաբուխ, Սիցիլիա
Մրցագորգ / Հերկ / Շախ
Խոր զգացմունք
Հնագույն բնակատեղի, ՀՀ / Ժողով
Գրենական պիտույք
Յուրի ... / Ժառանգակիր
Ամազոն
Իբսեն, պիես

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Աջափնյակ համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ապրագուշակ

Խոյ - Մասնագիտությունը հնարավորություն կտա հաղթահարել խնդիրները:

Ցուլ - Հնարավոր է հաջողության հասնեք նախաձեռնություններում, ուստ ավելի լավ է ոչինչ չհետաձգել:

Երկվորյակ - Չնայած դժվարություններին՝ հնարավորություն ունեք հաջողության հասնել: Պահպանեք ինքնատիրապետումը եւ հավատարիմ մնացեք սկզբունքներին:

Խեցգետին - Ամեն ինչ չէ, որ ըստ նախատեսվածի կընթանա: Շաբաթը լի է անակնկալներով:

Առյուծ - Անձնական հարաբերություններում հավանական են դրական փոփոխություններ: Մտերիմների հետ հարաբերվելը հեշտանում է:

Կույս - Շաբաթը բավական նպաստավոր կլինի: Սխալներ թույլ չեք տա, կընդունեք ճիշտ որոշումներ:

Կշեռք - Շաբաթը լի է բարդ, լարված իրավիճակներով: Աջակցության կարիք կունենաք:

Կարիճ - Հնարավորություն կունենաք հաջողության հասնել կարեւոր գործերում, լուծել բարդ խնդիրները:

Աղեղնավոր - Հնարավոր է, որ ձեզ պետք կգա աջակցություն: Դուք, անշուշտ, առանց դժվարության կգտնեք այն:

Այծեղջյուր - Կունենաք օգտակար ծանոթությունների հնարավորություն: Այցելեք միջոցառումների, որոնք կապված են ձեր աշխատանքի կամ նախընտրած ոլորտի հետ:

Ջրհոս - Ստիպված եք սպասել ե՛ւ մարդկանց, ե՛ւ իրադարձությունների: Ուզում եք արագ հասնել ձեր նպատակներին, բայց միշտ չէ, որ դա հնարավոր է:

Ձուկ - Ընդհանուր առմամբ՝ շաբաթը բարենպաստ է: Փորձեք խուսափել ավելորդ հուզումներից:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1. b4-a5 g3:b4 2. a3:e3x

Խնդիր N2 1. e5-d6 e7:c5 2. d4:a7 g1:d4 3. a7:f8x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 12.09.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: